

— Նկարագիր երգոց (տպ. Պոլիս, 1874)։

— Նուազք հայկականի (երգերու եւ շարականներու պարբերական թերթեր)։

Արիստակէս Յովհաննէսեանի շարականներու երգեցողութեան մասին գործադրած դրութիւնը քննելու համար 1873 ին կազմուած երաժշտական քննիչ Բանձնաժողովի կ'ատենապետէր։

Տնտեսեան իր տպագրած Երգարանին պատճառաւ 1881 ին բնտարկուեցաւ եւ նոյն տարւոյն Ապրիլ 23 ին վախճանեցաւ, զոհ ըլլալով իր հայրենասիրական զգացումներուն (Պ. Զայն, էջ 106-115)։

Թ

ԹՈՎՄԱՍ ԱՃԷՄԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ. — Աշկ. Սկիւտարի ձեմարանին. Պոլսի եւ Թէքիրտազի Ազգ. վարժարաններու մէջ պաշտօնավորած է. 1905-7, Ս. Յակոբի վանքի ժառ. վարժ.ի Հայերէնի եւ չափական գիտութեանց դասատու կարգուած է. յետոյ Պոլիս դառնալով շարունակած է իր պաշտօնը. 1916 Սեպտ. 27 ին կը վախճանի Պոլսի մէջ։ 1893 ին հրատարակած է Նոր Քերականութիւն հայերէն լեզուի, Ա. տարի, գասագիրքը։

Լ

ԼԵՒՈՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ. — Ծ. 1862 ին. աշկ. Հ. Թաշճեանի. 1881-3 ձայնագրագէտ-երաժիշտ դասատու Զմիւռնիոյ. բ. անգամ 1896-1904. որ ժամանակ կը հրատարակէ հայկական ձայնագրութեամբ Ս. Պատարագի բազմաձայն երգեցողութիւնը. կը պաշտօնավարէ Ատաբազար եւ Ղալաթիա. 1905-6, եւ կը կազմէ ստուարաթիւ երգչախումբ մը, նոյն պաշտօնով 1909 ին Պէշիքթաշ. 1911-1921 Բերա. 1922 ին կ'ստանձնէ Ս. Յակոբի վանքին դպրապետութիւնը եւ ժառ. վարժ.ի ձայնագրագէտ երաժշտութեան պաշտօնը։ Կը հրատարի 1929 Յուլիսին եւ կը մեկնի Կիպրոս։